ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 80

«03» 10 2022 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի N 99 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներ Արմեն Աֆանդյանին և Հայկ Ասլանյանին զբաղեցրած պաշտոններից ազատելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ համապատասխանաբար 23.09.2022թ. N 342-Ա և 27.09.2022թ. N 346-Ա հրամանները, Արթուր Պողոսյանին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ 2022թ. սեպտեմբերի 30-ի N 355-Ա հրամանը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2016 թվականի նոյեմբերի 3-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգում արձակուրդի և գործուղման հրամանների, ինչպես նաև ծառայողական վկայականների ստորագրման լիազորությունների նոր բաշխում կատարելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2016 թվականի հուլիսի 4-ի N 53, N 54, N 55 հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 99 հրամանի (այսուհետ՝ Հրաման) 1-ին կետի 2-րդ ենթակետում «**Ա. Աֆանդյանը**» բառերը փոխարինել «**Գ. Բաղդասարյանը**» բառերով, իսկ 1-ին կետի 3-րդ ենթակետում «**Հ. Ասլանյանը**» բառերը փոխարինել «**Ա. Պողոսյանը**» բառերով:
2. Ուժը կորցրած ճանաչել Հրամանի 1-ին կետի 4-րդ ենթակետը:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազին և դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ